ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

26 հունվարի 2023 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 (տասնմեկ) անդամներ:
Բացակա էին Ավագ Սահակյանը, Արմեն Սարգսյանը, Լիանա Գևորգյանն ու Վալենտինա Կաղիյանը:
Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:

Նիստին ներկա էր Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնհինգ անդամներից նիստին ներկա են տասնմեկը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 26-ի թիվ 1 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 90-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2.Բյուրեղավան համայնքի 2022 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 84-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 11 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 01-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 90-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 90-Ն որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի՝ ըստ հատվածների, որից՝

եկամուտների գծով՝ 429 401.4 հազար դրամ

ծախսերի գծով՝ 660 707.5 հազար դրամ

դեֆիցիտը (պակասուրդը)՝ 231 306.1 հազար դրամ

1) համայնքի բյուջեի եկամուտները՝ հատված 1.

2)համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ հատված 2.

3)համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3.

4)համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը(պակասուրդը)՝ հատված 4.

5)համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ հատված 5.

6)համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ հատված 6:»

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 3

Որոշումն ընդունված է. /որոշում N 02-Ն/

Լսեցին

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության

բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Ի գիտություն ընդունել Բյուրեղավան համայնքի ղեկավարի հաղորդումը 2022 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 3

Որոշումն ընդունված է. /որոշում N 03-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 84-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու, դրանց կազմը հաստատելու մասին» N 84-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը լրացնել նոր «ե» պարբերությամբ.

«ե. Էդիկ Պիճիկյան,»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /որոշում N 04-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Համայնքի ղեկավար Հ. Բալասյանը նիստին ներկա ավագանու անդամներին հայտնեց, որ որ «Արդար Հայաստան» խմբակցությունը իրեն գրավոր ներկայացրել է խմբակցության կանոնադրությունը և խմբակցության անհատական կազմը:

Հ. Բալասյանը հրապարակեց «Արդար Հայաստան» խմբակցության անհատական կազմը՝

Արմեն Համազասպի Սարգսյան՝ խմբակցության ղեկավար,

Վալենտինա Վիրաբի Կաղիյան՝ խմբակցության քարտուղար,

Լիանա Սամվելի Գևորգյան՝ խմբակցության անդամ:

Աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը հրապարակեց, որ, ի պատասխան իր կողմից ներկայացրած բացակայությունների մասին տեղեկանքների, Բյուրեղավան համայնքի ավագանու անդամներ Արմեն Սարգսյանը, Լիանա Գևորգյանը և Վալենտինա Կաղիյանը ներկայացրել են իրենց բացակայության պատճառները: 2023թ. հունվարի 17-ին ներկայացրած գրությամբ նրանք հայտնել են, որ 2022թ. նոյեմբերի 10-ի և նոյեմբերի 12-ի նիստերին չմասնակցելը բացառապես պայմանավորված է եղել «Արդար Հայաստան» կուսակցության ղեկավար Նորիկ Նորիկյանի քաղաքական հայտարարությամբ և դիրքորոշմամբ: 2022թ. նոյեմբերի 25-ի, դեկտեմբերի 09-ի, դեկտեմբերի 19-ի և դեկտեմբերի 27-ի նիստերին ներկա չգտնվելը պայմանավորված է ավագանու լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար բավարար պայմաններ չստեղծելու, նիստերի նախապատրաստումը, դրանց մասին իրազեկումը ոչ պատշաճ և իրավաչափ կազմակերպելու պատճառով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «ավագանու նիստերի հետ կապված փաստաթղթերն ավագանու անդամներին տրամադրվում են նաև էլեկտրոնային եղանակով» պահանջները չկատարելու պատճառով:

Լիլիթ Ավուշյանը հրապարակեց նաև «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից 2023թ. հունվարի 26-ի գրությամբ ներկայացված ավագանու անդամների՝ ավագանու նիստերից բացակայությունների պատճառների մասին .«Առաջնորդվելով 2022 թվականի նոյեմբերի 25-ի N 63-Ա որոշմամբ ընդունված ավագանու կանոնակարգի 22 բաժնի 123 ենթակետի՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը տեղեկացրել է, որ Բյուրեղավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի թիվ 1 նիստին, որը տեղի է ունեցել 2022 թ. նոյեմբերի 10-ին, «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցության բացակայության պատճառը եղել է հետևյալը. համայնքի մեծամասնությունը սեպտեմբերի 25-ին ընտրել է փոփոխությունը, և մեր՝ որպես հազարավոր քաղաքացիների վստահությունը

ստացած թիմի նպատակն է եղել ամեն կերպ նպաստել այդ փոփոխության իրականացմանը և քանի որ ընտրություններին մասնակցած կուսակցություններից ոչ մեկը չուներ ձայների մեծամասնություն և չկար կուսակցությունների միջև կոալիցիոն համաձայնություն, ուստի մենք հարցի լուծումը տեսել ենք հետևյալում՝ առաջին նստաշրջանի թիվ 1 նիստին չներկայանալով գնալ արտահերթ ընտրությունների, դրանով իսկ սկիզբ դնել պայքարի երկրորդ փուլին և բերել համայնքում երկար սպասված փոփոխությունները:

Բյուրեղավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի թիվ 2 հերթական նիստին՝ այն է՝ համայնքի նորընտիր ղեկավարի երդմնակալության արարողություն, որը տեղի է ունեցել 2022թ. նոյեմբերի 12-ին, «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցությունը չի ներկայացել, քանի որ մեզ համար անընդունելի են եղել դեռևս նոյեմբերի 10-ին տեղի ունեցած թիվ 1 նիստի արդյունքները, և մենք՝ «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցությունը, չենք ցանկացել մեր ներկայությամբ օրինականացնել այդ երդմնակալության արարողությունը:

Բյուրեղավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի թիվ 4 արտահերթ նիստին, որը տեղի է ունեցել 2022 թ. դեկտեմբերի 09-ին, «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցությունը չի ներկայացել նիստին վերջինիս կայացման ժամանակահատվածի և խմբակցության ավագանիների գրաֆիկների անհամանապատասխանության պատճառով:

Բյուրեղավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի թիվ 5 հերթական նիստին, որը տեղի է ունեցել 2022թ. դեկտեմբերի 19-ին, «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցության ավագանի Ավագ Սահակյանը բացակայել է՝ աշխատանքի ծանրաբեռնվածության պատճառով:

Բյուրեղավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի թիվ 6 հերթական նիստին, որը տեղի է ունեցել 2022թ. դեկտեմբերի 27-ին, «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցության բացակայության պատճառը եղել է անձնական անհետաձգելի խնդիրները:»

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ _____

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ _____

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____

ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ _____

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ԱՇԽԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ